

Աւելի վարը, հեղինակը նման երեւոյթ — ներ կը նկարագրէ քիչ մը տարբեր ոճով:

Եթէ գիւնուր տեսնեմ՝ կը սպասեմ մահուան,
Եթէ ձեռք մը բարձրացած՝ կը կոյանամ,
Թէ խորտուիլակ մը փոքրիկ՝ կը սարսիմ,
Եթէ լըսեմ թնդիւն մը բեքեւ՝ կ'ընդոստնիմ:

— Բան ԻԳ —

Նոյն տեսակէն է հետեւեալն ալ:

Անբեւոյթ կրակարան մը տաք կը բորբոքի մէջս անգովանալի,
Որպէս թէ անտես հալոց ու քրանք կ'եռան մէջս անշիջանելի:
Թոյնով ջրդեղուած մետի պաւներ կան ըշտեմարանին մէջ խորն իմ սրտի:
Ցաւի խիթեր մահացու կերպով կը խոցեն բոլոր երակներս լեարդի:
Ճեպելու անմար՝ չի կրնար ելիլ աղիքներէս դուրս խոստովն երկունքի,
Ջերմութիւնն՝ որուն դեղեր չեն գործեր՝ երկամուսնիս է լափեր երկունքի:
Զափէ կարգէ դուրս դառն մաղձն ահա նախադուռն հասեր է իմ կոկորդի:
Վրեւակեցնող ձայներ աւաղի խիստ կը հնչեն մէջն իմ շնչափողի:

— ԲԱՆ ԻԶ —

Ահա՛ թէ ինչպիսի՛ հակադրեցութիւններով կ'արտայայտուին հոգեկան տաղնապները մարդու Փիղիքական կազմին վրայ, երբ «գգայուն ու խոհուն սիրտն է խոցուած խղի խայթերով»:

Այս պատկերալից երեւոյթները, որքան բանաստեղծական ներշնչում՝ նոյնքան ալ բնախօսական հակադրեցութիւններու ճշգրիտ նկարագրութեան ծնունդ առած փաստարկութիւններ են, որոնք լիովին կ'ապացուցանեն՝ թէ փոթորկած հոգիի մը խռովքները ո՛րքան բուռն կերպով կը ցնցեն մարդու ամբողջ մարմինը, շարժման մէջ կը դնեն մեր ներքին գործարանները, գեղձերը, ջղային գրութիւնը, ու խոռվայոյց ծփանքներ յարուցանելով՝ կը խանգարեն մինչեւ իսկ մեր ամենայնայնիւ բջիջին Փիղիքական եւ բնախօսական հասարակչութիւնը:

Այս տուեալներու լոյսին տակ, Նարեկացիին երեւան կու գայ իր անհատականութեան կրկնակ խոսնուրդովը: Մէկ կողմէն՝ միատիպ հաւատաւորի արտայայտու-

թիւններովը՝ հոգին մարմինէն բաժնող անջատողական տեսլականովը, միւս կողմէն՝ դրապաշտ գննողի ուղիովը, հոգին մարմինին կապող փոխադարձ հակադրեցութիւններովը:

Աւելորդ է ըսել, թէ Նարեկացիին այս կարգի դիտողութիւններ չէ ըրած հակադրելու համար անջատողականութեան վարկածին, այլ մատնանիշ ըրած է զանոնք իրեն բնական երեւոյթներ, առանց պահ մը իսկ անդրադառնալու՝ թէ հոգեմարմնական չաղկապումէն ծնունդ առնող փոխադարձ հակադրեցութիւնները, զօրաւոր փաստեր են հոգիին եւ մարմինին միասնականութիւնը նուիրագործող:

Մենք դիտումնաւոր կերպով մատնանիշ ըրինք մարդկային բնութեան ըզրող այդ տուեալները, նկատի ունենալով որ անոնք միջանկեալ օղակը կը կազմեն անցեալի եւ ներկայի ըմբռնումներուն:

ՏՊԵԹ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

(Շարունակելի)

ՄԵՐ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ԱՅՆ որ օտար մամուլին քիչ թէ շատ կը հետեւի, տեսած ըլլալու է թէ գրողներու, հանրային մարդոց, արուեստագէտներու նամակները ստուար ու մասնաւոր հատորներով կը հրատարակուին: Ինչպէս նաեւ անոնց յիշատակներն եւ օրագրութիւնները:

Այս հրատարակութիւնները պատմական լաւագոյն ատաղձները կը կազմեն, եւ ընդհանրապէս լոյս կը սփռեն այդ դէմքերուն վրայ, յայտնելով անոնց ստացած կրթութիւնն ու գաստիարակութիւնը, կըրած ազդեցութիւնները, աշխատելու կերպը, աւելի մտերիմ ու անկեղծ մտածումները, նաեւ զգացումները: Այս հրատարակութիւնները կրնան բացատրել, կրնան ճշգրէ կարգ մը մուրթ մնացած կէտերը, դէպքերը, եւ այս ձեւով կը բացատրեն նաեւ անոնց գործերը, արուեստը, շատ անգամ լաւագոյն եղանակով:

Ինչպէս կ'ըսէ Քէյսէրլինկ, մարդոց գործերը հասկնալու համար, նախ զիրենք ճանչնալու է: Գործը՝ մարդուն յղացումն ու արտադրութիւնն է: Նիցշէ կը խոստովանի իր երկերէն մէկուն մէջ. — «Հետը հետէ, քիչ առ քիչ, ես համոզուեցայ թէ ինչ եղած է մինչեւ հիմա ամէն մեծ փիլիսոփայութիւնը. — իր հեղինակին խոստովանութիւնը, եւ տեսակ մը յուշագիր՝ աղամայ եւ աննշմար»:

Ստեֆան Զվալգե՝ կենսագրութիւններու անմրցելի վարպետը, իր յետ մահու հրատարակուած «Երեկուան աշխարհը» անուն գրքին մէջ, որ ընդհանրապէս իր յիշատակները կը կազմէ, կը պատմէ թէ ինք քննած է, ի միջի այլոց, Պէթսֆոլէնի ձեռագիրները ու հաստատած այս հանձարին տեսական պայքարը՝ իր գլուխ գործոցնե-

րը արտադրելու պահերուն, արտադրելու համար. հաստատած, նաեւ, թէ ինչպէս Մոցարթը դիւրութեամբ, մէկ գրիչով, մէկ շունչով, առանց սրբագրութեան կ'արտագրէր: Այս իրողութիւնները իրապէս ալ կը զգանք իրենց գործերուն ունկնդրութեան:

Իսկ ինք իր մասին խօսելու առթիւ, Ստեֆան Զվալգե կը յայտնէ թէ իր գրութիւններուն ինք տառնաբոլոր յաճախ ջրնջած է, տպագրութեան տալէ առաջ. ինչ որ կը բացատրէ իր խնամուած լեզուն, յստակութիւնը, ինչպէս նաեւ աւելորդաբանութեան ու ճապարկութեան պակասը՝ իր բոլոր գործերէն:

Այս հեղինակին մահէն յետոյ հրատարակուեցաւ նաեւ Պալլաքին վրայ գրած իր մէկ ուսումնասիրութիւնը: Հոն կը տեսնուի թէ ինչքան այս վերջինին թրջութեամբ ինք, սրբագրութիւնները եւ զանազան թուղթերը՝ որպէս վկայութիւն ծառայած են Ստեֆան Զվալգին, ներկայացնելու համար «Մարդկային կատակերգութեան» հանձարեղ հեղինակին ղէմքը, մարդը, գործը, զգացումները, բարձրութիւններն ու պղտիկութիւնները, գրականութիւնը, մտածումները: Եւ հոյակապ կերպով:

* * *

Բայց մեր՝ հայերու մէջ, շատ հազուադիւր են նամակներու, օրագրութիւններու հրատարակութիւնները: Մեր գրեթէ բոլոր գրողներուն եւ արուեստագէտներուն մասին շատ բան կ'անդիտանանք եւ շատ քիչ բան միայն դիտենք:

Վերջերս, Վահան Թէքեանի մաս մը նամակներուն լոյս տեսնելը օգնեց նաեւ

այս բանաստեղծին գրականութեան կարգ մը կողմերուն բացատրութեան:

Անշուշտ մեր գրողներէն ալ շատեր նամակ առաքած են իրենց ծանօթներուն, բարեկամներուն, արուեստակիցներուն, կամ օրագիր բռնած: Հակառակը կարելի չէ ենթադրել: Բայց կարելի չէ նաեւ ենթադրել՝ նման թղթակցութեան եւ օրագիրներու բացակայութենէն, թէ ասոնք՝ բոլորն ալ, կորսուած ըլլան թուրքիոյ դէպքերուն մէջ. մեր գրողներէն եւ արուեստագէտներէն ոմանք արդէն շատոնց արտասահման անցած էին խաղաղ օրերուն իսկ: Այս նամակներուն եւ օրագիրներուն հրատարակութիւնը մեծ նպաստ մը պիտի կազմէ մեր գրականութեան եւ մինչեւ անգամ մեր ժամանակակից պատմութեան համար:

Վերջին պատերազմէն առաջ, Արշակ Զօպանեան Անահիտին մէջ հրատարակեց Գրիգոր Զօհրապէն նամակ մը եւ յիշատակներ. այս հրատարակումը կարգ մը լուրջ եւ կարեւոր բացատրութիւններ բերաւ Զօհրապէն ազգային գործունէութեան, մտածելակերպին եւ նոյնիսկ իր գրականութեան վրայ: Իրական լոյս մը: Անկարելի է որ Զօհրապէ՝ որ, ըստ Հրանտ Ասատուրին, գիւրդութեամբ արտադրելու արտակարգ կարողութիւն մը ունէր, դժբաղդ չըլլայ նաեւ ուրիշ բարեկամներու՝ Զօպանեանէ զատ, զանազան նիւթերէ վըրայ: Իր նամակներուն ու անձնական թուղթերուն հրատարակութիւնը կարեւոր լոյս պիտի սփռէր իր դէմքին ու իր գրականութեան վրայ:

Այսպէս, բոլորովին ժամանակակից մեր գրողներուն մասին անգամ շատ քիչ բան գիտենք: Բայց չափազանց քիչ բան: Այս գլխաւոր պակասին հետեւանքովը՝ մեր գրագէտներուն մէջ նախ մարդը, յետոյ արուեստագէտը գրեթէ անծանօթ կը մընան: Գրող մը լիովին հասկնալու համար,

յետոյ նաեւ իր գործերը բացատրելու համար, պէտք է տեղեակ ըլլալ իր նոյնիսկ ներքին կեանքին, իր անձնական չհրապարակուած մտածումներուն, մտերիմ զրացումներուն, ու տառապանքներուն, իր ապրելակերպին, աշխատելու եղանակին, ընթերցումներուն, նախընտրած հեղինակներուն, իր սիրած արուեստներուն: Եւ րոպացիները մեծ ու խղճամիտ աշխատանք կը տանին այս իմաստով. իրենց բոլոր հեղինակները, իրենց բոլոր արուեստագէտները ամբողջապէս, անոնց բոլոր կողմերովը ուսումնասիրուած են, լոյսին հանուած են:

Այս մասին, նամակները եւ յիշատակները խոշոր դեր կը կատարեն: Հոս, սակայն, լուրջ հարց մըն ալ կը ծագի: Եթէ կարելի չէ ժամանակակից, կամ գրեթէ ժամանակակից, օրինակ վերջին դարուն մէջ արտադրած հեղինակներուն նամակները կեղծել, բայց կարելի է, որ մարդիկ փորձեն խեղաթիւրել յիշատակները: Բերանացի յիշատակները ըսել կ'ուզեմ: Նըման պարագաներ շատ պատահած են պատմութեան մէջ, նոյնիսկ նամակներու եւ փաստաթուղթերու մէջ: Եւ խեղաթիւրումը չէ միակ թերութիւնը. կայ նաեւ կողմնակցութիւնը. կայ դեռ սխալ տեղեկութիւն առած ըլլալու կարելիութիւնը: Կողմնակալ, նախապաշարեալ պատմող մը կրնայ բոլորովին անկեղծ ըլլալ. միայն թէ սխալ կը տեսնէ, եւ սխալ տեսնելով՝ իր հաղորդակցութիւնը կ'ըլլայ անճիշդ, հետեւաբար, ինչ որ պատմութեան համար գրեթէ նոյն արժէքը ունի: Պատմողներ ալ կան որ գտելու, ճշմարիտը գտելու, քննելու, տրամաբանելու կարողութիւնը պէտք եղած աստիճանին չեն ունենար. ա՛յս ալ վտանգաւոր է եւ ընթերցողը կը տանի սխալ ճամբաներու, սխալ եզրակացութիւններու: Վերջապէս, դեռ ուրիշներ ալ կան, որ իրենց փափաքները իսկոյն որպէս իրականութիւն կը դաւանին: Նախապա-

շարեաներէն զատ, որոնք, կարծեմ, ամէնէն վտանգաւորներն են:

Վերջերս «Այսօր»-ի մէջ հրատարակուեցան Լեւոն Բաշալեանի յուշերը. յուշեր՝ որոնք կը վերաբերին Լոգանի Ոորհրդա-ժողովին: Իրենց հետաքրքրութեամբը, մասնաւոր ուշադրութիւն գրաւեցին: Ստուգիւ, այս յուշերը՝ օրագրի ձեւին տակ, իրական լոյս մը կը սփռեն աղբիւրի կատարուած բանակցութեանց, մեր ազգային դատին միջազգային կացութեան, եւ մեր մտայնութեան եւ գործելակերպին վրայ. անոնք ամէնէն թանկագին եղբայր-կացութիւնները, դասերը կը պարունակեն՝ հասկնալ ուղղին համար: Կարեւոր կէտեր՝ մեր պատմութեան եւ ներկային, հետեւաբար եւ մեր ապագային համար ալ:

Կը խորհիմ թէ Պօղոս Նուպար փաշային թուղթերը ա՛լ աւելի կրնան իրական եւ օգտակար վկայութիւններ, դասեր պարունակել, անկասկած. Լեւոն Մկրտիչեան հաւաստած էր ինծի, արդէն շատոնց, թէ մեր պատմութեան համար դանձ մը պիտի ըլլային անոնք: Մկրտիչեան աշխատակցած էր Պօղոս փաշային հետ, մասնաւոր Ազգային Պատուիրակութեան գործերուն առթիւ: Ո՛վ պիտի հրատարակէ, օր մը, այս վաւերացութիւնները:

Շատ յաճախ մտածած եմ. մեր գրական եւ պատմական հարստութենէն կարգ մը դանձեր, շատ մը անգին դանձեր կորսուեցան այսպէս, կերպով մը անհոգութեան երեսէն, եւ դեռ կորսուելու վրայ են, հետզհետէ նախկին սերունդին մարդոց մահերովը: Հոս ու հոն, զանազան թերթերու մէջ եղած մասնակի հրատարակութիւններն ալ այս կորուստին առաջը բոլորովին չեն կրնար առնել: Մարմին մը պէտք է այս բոլոր մասունքները հաւաքելու, եւ մասնաւոր հատորներով մէջ ու մէքստով հրատարակելու համար: Այս իմաստով, գրական մարդին մէջ, ատեն մը

Փարիզ կազմուած «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ» անուն միութեան լոյս հանած գործերը անգնահատելի ծառայութիւն բերին հայ գրականութեան: Նոյնպէս Գահիրէէն Հայկ Ժամկոչեանի հրատարակութիւնը՝ հատորի մը մէջ, Գրիգոր Զօհրապէ մաս մը լրագրական յօդուածներուն, գովելի եւ օգտակար փորձ մըն է: Բայց սկսելու է նախընտրութիւն տալ ձեռագիրներուն, կորսուելու ստոյգ վըտանգէն ազատելու համար դանձեր: Հետաքրքրական են նաեւ Անայիսի յիշատակները, իրենց որոշ թերութիւններովն ու պակասներովը հանդերձ: Վստահ եմ թէ այս հրատարակութիւնները նոր լոյսեր պիտի սփռեն մեր գրական քննադատութեան վրայ, ու երեւան պիտի հանեն հայ նկարագրին ալ կարգ մը կէտերը. մութ մնացած, կամ ուսումնասիրութեան տակաւին չենթարկուած գիծերը՝ այս նկարագրին:

Զեմ հանդիպած սփիւռքի մէջ հրատարակուող ոեւէ հայ թերթի մը ոեւէ մէկ թիւին, ո՛ր կուսակցութեան, ո՛ր յարանուանութեան, ո՛ր հատուածի ալ պատկանի ան, կամ ըլլայ բոլորովին չէզոք, որ գովելի նախանձախնդրութիւնը, հոգը չարտայայտէ՝ հայ մշակոյթը կենդանի պահելու, զայն վարդապետելու, անոր ծառայելու: Ուստի, այս մտածումին, այս միտքին համուռ մտածումին առջեւ՝ ամէնէն անհրաժեշտ աշխատանքը, պարտականութիւնը հանդէպ մեր գրականութեան, հանդէպ ազգասիրութեան, կը կայանան կորուստի ենթարկուած գրական ու պատմական մասունքները ազատելը:

Քիչ վերը տեսանք թէ ինչի՞ մէջ կը կայանայ այս աշխատանքը, այս անյետաճրգելի պարտականութիւնը, որ յապաղում չի ներեր այլեւս:

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՊԱՅ

Աղեքսանդրիա